ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ
համայնք, 5-փ 7, Հեռ. 2-42-26 ,
norik.melkonyan@mail.ru

N 74
10 օգոստոս 2021թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ ԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Ողջաբերդ համայնքի ղեկավարի 2021 թվականի օգոստոսին կայացրած թիվ 25-Ա որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կատ. Քարտուղար՝ Մ. Կարապետյան
Հեռ.՝ 098-29-30-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ողջաբերդ, 2-42-26, norik.melkonyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 օգոստոսի 2021 թվականի N 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագնու 2021 թվականի օգոստոսի 03-ի թիվ 20-Ա որոշումը՝

որոշում եմ՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ողջաբերդի համայնքապետարանի և քաղաքացի Արմեն Աշոտի Հովհաննիսյանի միջև 2003 թվականի հուլիսի 15-ին կնքվել է 07-052-0138-0004 կադաստրային ծածկագրով 10 հա գյուղատնտեսական նշանակության /4-րդ կարգի անջրդի վարելահող/ հողամասի վարձակալական պայմանագիր և վարձակալը 18 տարի բարեխղճորեն կատարել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ նշված հողամասը ուղղակի վաճառքի եղանակով օտարել հողամասի վարձակալ Արմեն Աշոտի Հովհաննիսյանին՝ 4000000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով:

2.Սահմանել, որ Արմեն Աշոտի Հովհաննիսյանը սույն որոշման ընդունումից հետո, 15-օրյա ժամկետում Ողջաբերդ համայնքի բյուջեի N 900105227178 հաշվին պետք է վճարի 4000000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում՝ որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Հայկանուշ Բաբայանին՝ հողօգտագործողի կողմից սույն որոշման 2-րդ կետում

նշված գումարի վճարումից հետո 10-օրյա ժամկետում հողօգտագործողի հետ կնքելու հողամասի առուվաճառքի պայմանագիր:

5.Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Մարիամ Կարապետյանը:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Արմեն Աշոտի Հովհաննիսյանին որոշման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՄԵԼՔՈՆՅԱՆ

20 21 թ. հունվարի 04

գ.Ողջաբերդ